ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ Ս. ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

ԳԼՈՒԽ Ա.

Ինուանդ Տեառն մերոյ. Գալուստ Մոգուցն. Կատարումն մանկանց։ Յովհաննէս մկրտիչ. Հերովդէս. Աբգար. Պիղատոս. Հրեշտակք Աբգարու։ Մկրտութիւն Տեառն և քարոզութիւն նորին մինչեւ 'ի համբառնալն յերկինս։

Յամի քառասներորդի կայսերութեանն Հռոմայ Օգոստոսի և յերկրորդի թագաւորութեանն Հայոց Աբգարու յԵդեսիա, եւ յերեսներորդի եօթներորդի թագաւորութեանն Հրէաստանի Հերովդէի մեծի Ասկալանացւոյ, «Եկ հրաման 'ի նմին իսկ Օգոստոս կայսերէ աշխարհագիր առնել ընդ ամենայն տիեզերս»։ որպէս պատմէ Աւետարանագիրն Ղուկաս։ Եկին և սիռեցան գործակալք ինքնակալին ընդ ամենայն գաւառս տէրութեանն, ածեալ ըստ պատկեր նորին Օգոստեայ կանգնել 'ի մեհեանս դից մէն մի ազգաց։ Ի սմին ժամանակի ծնաւ Փրկիչն մեր և ամենակալ թագաւորն Յիսուս Քրիստոս անճառելի և անասպական ծննդեամբ՝ յանարատ կուսէն Մարիամայ 'ի Բեթղեհէմ Հրէաստանի՝ յանշուք և 'ի գծուծ այրի, պատեալ 'ի խանձարուրս եւ եդեալ 'ի մսուր անբանից։ Զի սուրբ կոյսն Մարիամ եկեալ էր ընդ Յովսեփայ 'ի Նազարեթէ մտանել յաշխարհագիր 'ի քաղաքի Դաւթի։ Հովիւքն բացօթեայք աւետեօք հրեշտակաց տեսին զհին աւուրցն մանկացեալ 'ի գիրկս կուսին։ Թլփատեցաւ ութօրեայ, եւ կոչեցաւ անուն նորա Յիսուս՝ ըստ կանխասաց բանի հրեշտակին։ Ասողն նորատեսիլ եղեւ առաջնորդ Մոգուցն արեւելից,